



## Կանոններում գործածվող հիմնական եզրույթներ և հասկացություններ

Սույն կանոններում գործածվող հիմնական եզրույթներն ու հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ:

- **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություններ, ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ** – Պետական մարմիններ, որոնց հովանու ներքո է իրականացվում մրցույթը Հայաստանում, Արցախում և սփյուռքում:
- **«Այբ» կրթական հիմնադրամ** – Մրցույթի բացառիկ կազմակերպիչը Հայաստանում, Արցախում և սփյուռքում (Երևան 0037, Ազատության 1/21, (077) 01-08-63, [meghu@ayb.am](mailto:meghu@ayb.am), [www.contests.am](http://www.contests.am), [www.ayb.am](http://www.ayb.am)):
- **Մարզային համակարգողներ** – Մրցույթի աշխատանքային խմբի անդամներ՝ «Այբ» հիմնադրամի աշխատակիցներ, ովքեր անմիջականորեն զբաղվում են մրցույթի կազմակերպչական հարցերով:
- **Կրթական կառույց** – Ուսումնական հաստատություն՝ դպրոց, քոլեջ, կրթական ծրագիր (սփյուռքի որոշ կառույցներ), որի սաները գրանցվել և մասնակցել են «Մեղու» մրցույթին:
- **Մրցույթի պատասխանատու** – Կրթական կառույցի կողմից լիազորված աշխատակից, որը կհամակարգի մրցույթի կազմակերպման հետ կապված բոլոր աշխատանքները: «Այբ»-ը և մարզային համակարգողները կապ կպահպանեն անմիջապես մրցույթի պատասխանատուի հետ:
- **Մասնակիցներ** – 3-12-րդ դասարանցիներ, ովքեր մրցույթին մասնակցելու համար մինչև հայտարարված վերջնաժամկետը սահմանված կարգով գրանցվել և վճարել են մրցույթի առցանց հարթակում:
- **Հուշանվերներ** – Մրցույթի բոլոր մասնակիցներին տրվող Էլեկտրոնային նվերներ, որ ուղարկվելու են մասնակցի՝ հարթակում գրանցվելիս նշած Էլ. փոստին:
- **Մրցանակներ** – Արդյունքների ամփոփումից հետո բոլոր մասնակիցները Էլ. փոստով ստանում են վաստակած միավորը փաստող մասնակցության Էլեկտրոնային հավաստագրեր, իսկ մրցանակակիրներին շնորհվում են խրախուսական մրցանակներ: Կրթական կառույցները, որոնց սաները մասնակցել են մրցույթին, ստանում են մասնակցության հավաստագիր (Էլեկտրոնային):
- **Մրցույթի մրցանակակիրներ** – Մրցույթն ունի երկու կարգի մրցանակակիր՝ *հաղթող*, *լավագույն*: Հաղթող և լավագույն անվանակարգերում մրցանակակիրների միավորների շեմերը որոշվում են տվյալ տարվա բոլոր մասնակիցների վերջնական արդյունքների ընդհանուր հաշվետվության հիման վրա:
- **Մրցութային փաթեթ** – Տվյալ տարվա թեստային առաջադրանքների տարբերակներ՝ նախատեսված հինգ տարիքային խմբերի համար՝ երկու տարբերակով: Մրցույթի օրը առցանց հարթակ մուտք գործած յուրաքանչյուր մասնակցի համար մրցույթի մեկնարկից հետո հասանելի են լինում միայն իր տարիքային խմբի համար նախատեսված առաջադրանքները: Բոլոր տարիքային խմբերի առաջադրանքները չկրկնվող են, մշակվում են մասնագետների խմբի կողմից:

- **Ծածկագիր** – Կրթական կառույցին «Այբ»-ի կողմից շնորհվող թվային անփոփոխ ծածկագիր (բոլոր տարիների համար), որը կարող եք գտնել [www.contests.am](http://www.contests.am) կայքում կամ իմանալ «Այբ» հիմնադրամի աշխատակցից:
- **Մրցույթի առցանց հարթակ** – առցանց վեբ հարթակ (<https://spyurk.contests.am/hy>), որտեղ անցկացվում է մրցույթը: Հարթակը հնարավորություն է ընձեռում մրցույթին մասնակցելու համար աշակերտներին գրանցվել, մուտք գործել, մասնակցել մրցույթին, լուծել թեստը՝ նշել առաջարկված 5 պատասխաններից նախընտրելի ճիշտ տարբերակը, ավարտված աշխատանքը հաստատել և ուղարկել ստուգման:
- **Մասնակցության վճարում** – Յուրաքանչյուր երեխայի մասնակցության համար վճարվող գումար, որը կազմում է 970 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ: Վճարում կարելի է կատարել **միայն** մրցույթի հարթակում տվյալները լրացնելուց հետո բանկային քարտով փոխանցում կատարելու միջոցով (Visa կամ Master տեսակի քարտերով):
- **Մրցույթի մասնակիցների ցանկ** – Յուրաքանչյուր կրթական կառույց մինչ մրցույթի մեկնարկը տրամադրում է իր մասնակիցների ցանկը, որտեղ պետք է լրացված լինեն աշակերտների տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, դասարանը, սեռը:

**1. Մրցույթի մասնակիցները**

- 1.1. Մրցույթի հիմնական նպատակը ինչպես ՀՀ-ում, այնպես էլ սփյուռքում, հայ դպրոցականների ամենալայն շրջանում հայերենի հանդեպ հետաքրքրության խթանումն է, ուստի մրցույթին կարող են մասնակցել դպրոցների 3-12-րդ դասարանցի բոլոր ցանկացողները: Մրցույթին կարող են մասնակցել նաև հիմնական կրթության հենքի վրա գործող այն քոլեջների 1-3-րդ կուրսի ուսանողները, որոնց կրթական ծրագիրը համապատասխանում է ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների ծրագրին: Մրցույթի առաջադրանքների տարբերակները բաժանված են ըստ հինգ տարիքային խմբերի՝ 3-4-րդ, 5-6-րդ, 7-8-րդ, 9-10-րդ և 11-12-րդ դասարաններ: *Որևէ նախնական ընտրություն կատարելը, որևէ աշակերտի կամքին հակառակ նրան մրցույթին մասնակցելուց զրկելը, մասնակցությունը պարտադրելը կամ որևէ կերպով նրա մասնակցությանը խոչընդոտելը դեմ են «Մեղու» մրցույթի սկզբունքներին և անընդունելի են:*
- 1.2. Ովքեր կարող են մասնակցել մրցույթին
  - 3-12-րդ դասարանի աշակերտներ, ովքեր գրանցվել են մրցույթի հարթակում և վճարել են բանկային քարտով փոխանցում կատարելով:

**2. Մրցույթի անցկացումը**

- 2.1. Հայաստանում, Արցախում և սփյուռքում մրցույթի բացառիկ կազմակերպիչը «Այբ» կրթական հիմնադրամն է: Մրցույթն իրականացվում է Հայաստանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, սփյուռքում նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի, իսկ Արցախում՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հովանու ներքո ([www.escs.am](http://www.escs.am), [www.edu.nkr.am](http://www.edu.nkr.am)):
- 2.2. Մրցույթի կազմակերպման աշխատանքներում ներգրավված են «Այբ» կրթական հիմնադրամը, մարզային համակարգողները և մասնակից կրթական կառույցները: Յուրաքանչյուր կրթական կառույցի կողմից նշանակվում է **մրցույթի պատասխանատուն**, որը համակարգում է մրցույթի կազմակերպման աշխատանքները (աշակերտների տեղեկացում մրցույթի մասին, մրցույթի կարգին ծանոթացում, գրանցման ուղղորդում, մասնակիցների ցուցակագրում):
- 2.3. Մրցույթի պատասխանատուի մոտ ցանկում ընդգրկվելուց հետո, մասնակիցները նաև պետք է գրանցվեն մրցույթի հարթակում <https://spyurk.contests.am/hy>:

- 2.4. Յուրաքանչյուր մասնակից աշակերտ (անկախ մրցույթի արդյունքներից) և մասնակից կրթական կառույց ստանում է **մասնակցության էլեկտրոնային հավաստագիր**:
- 2.5. 2021 թ.-ին մրցույթը կանցկացվի հոկտեմբերի 31-ին:
- 2.6. Մրցույթի անցկացման ժամերը հետևյալն են՝  
3-4-րդ դասարանցիներ՝ 14.00-ից 15.15 Երևանի ժամանակով,  
5-6-րդ դասարանցիներ՝ 14.00-ից 15.15 Երևանի ժամանակով:
- 2.7. Մրցույթի պատասխանատուն տեղեկացնում է աշակերտներին, որ մեկնարկել է «Մեղու» մրցույթը, ցուցակագրում մասնակիցներին, ուղղորդում ինչպես գրանցվեն առցանց հարթակում <https://spyurk.contests.am/hy>, և կատարեն վճարումը:
- 2.8. Մրցույթի մասնակիցը համացանցին հասանելիություն ունեցող որևէ թվային սարքի միջոցով (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) **գրանցվում է հարթակի մրցութային հասվածում** <https://spyurk.contests.am/hy>, հաջորդական քայլերով լրացնում պահանջվող տվյալները: Տվյալների մեծ մասը պետք է ընտրել ներբեռնված ցուցակներից, այդպիսիք են՝ Երկիր, մարզ թողնել առանց ընտրության, իսկ մնացյալը մուտքագրում է գրանցվողը՝ **կրթական հաստատություն, անուն-ազգանուն-հայրանուն, հեռախոսահամար, գործող էլ. փոստի հասցե, ծննդյան վկայականի համար** (անհրաժեշտ է մասնակցին անհատականացնելու համար), **գաղտնաբառ** (սա պետք է հիշել ամենայն ճշգրտությամբ, որպեսզի մրցույթի օրը մուտք գործելիս խնդիրներ չառաջանան):
- 2.9. Մասնակցի տվյալները հարթակում գրանցելուց հետո համակարգը ուղղորդում է կատարել վճարում բանկային փոխանցման միջոցով: Վճարումը կատարելուց հետո կակտիվանա օգտահաշիվը մրցույթի հարթակում:
- 2.10. Մրցույթի օրը մասնակիցները պետք է մուտք գործեն հարթակ, որտեղ նշված ժամին հասանելի կլինեն առաջադրանքները: Մրցույթի ընթացքում մասնակիցը պետք է մեկնակ լինի սենյակում, որպեսզի կարողանա կենտրոնանալ առաջադրանքների լուծման վրա և հնարավորինս չձեռվի՝ կորցնելով թանկարժեք ժամանակը: Եթե դա անհնար է, ապա ընտանիքի անդամները պետք է պահպանեն լռություն, չմիջամտեն, չխանգարեն մասնակցին ինքնուրույն աշխատել: **Հիշեցնենք, որ մրցույթի հեղինակությունն ու արդյունքների ճշտությունը կախված են մրցույթի անցկացման պատշաճությունից:**
- 2.11. Մրցույթին նույն ընտանիքից մեկից ավելի երեխաների մասնակցության դեպքում նրանք պետք է օգտվեն տարբեր սարքերից, խիստ ցանկալի է գտնվեն տարբեր սենյակներում, աշխատեն ինքնուրույն, խուսափեն խորհրդակցելուց, միմյանց չխանգարեն:
- 2.12. Մրցույթի ժամանակ մասնակիցը սևագրության համար կարող է օգտագործել **մաքուր թուղթ**:
- 2.13. Մրցույթի ընթացքում **նույն մասնակցի տվյալներով չի կարելի հարթակ մուտք գործել մեկից ավելի թվային սարքով, այլապես համակարգը հասկանում է անպատշաճ մուտք և մասնակցի մոտ թեստի հետ աշխատանքը խափանվում է**: Մրցույթի 75 րոպեների ընթացքում պարտադիր է ինքնուրույն աշխատելու համար անհրաժեշտ պայմանների, անխափան ինտերնետային կապի ապահովումը: **Հուշումները, արտագրությունները, միջամտությունները, խոսելն ու քննարկումները խստիվ արգելվում են**: Հորդորում ենք ընտանիքի անդամներին զերծ մնալ բնակարանի ինտերնետը ծանրաբեռնելուց մրցույթի մեկնարկի պահից մինչև ավարտը, որպեսզի մասնակցող երեխայի մոտ կապի հզորության նվազում չլինի:
- 2.14. Մրցույթի կանոնները զետեղված են հարթակում, և գրանցվելիս պետք է ծանոթանալ դրանց բովանդակությանը ու հաստատել դա: Մրցույթի առաջադրանքների լուծման համար հատկացվում է ուղիղ **75 րոպե**: Այս ժամանակը հաշվարկվում է հարթակում առաջադրանքները մասնակցին հասանելի դառնալու պահից: 75 րոպե հետո մրցույթն

ավարտվում է, թեստը դառնում է անհասանելի, իսկ մասնակցի կողմից նշված պատասխանները պահպանվում են և ուղարկվում հետագա ստուգման:

2.15. Հարթակում գրանցվելիս որպես օգտանուն պետք է մուտքագրել գործող էլ. փոստի հասցե և հեռախոսահամար: Վերջինիս sms-հաղորդագրությամբ ուղարկվում է գրանցումը հաստատող թվային ծածկագիր, որը պետք է մուտքագրել հարթակում այդ պահին բացված պատուհանում: Եթե sms ծանուցում չի գալիս, անհրաժեշտ է գրել մրցույթի համակարգողին [meghu@ayb.am](mailto:meghu@ayb.am) մեյլով՝ նշելով էլ. հասցեի վերնագրում «Սփյուռք» բառը, և համակարգողը կկարգավորի այդ խնդիրը: **Էլ. հասցեն կարևոր է նաև հետագայում մրցույթների արդյունքների տեղեկացման համար:**

2.16. Առաջադրանքները հարթակում հասանելի կդառնան մասնակիցներին ըստ տարիքային խմբերի, ժամանակացույցը կա կարգում և այն նաև որպես հիշեցում նախապես կուղարկվի մասնակիցներին և կրթական կառույցներին էլ. փոստով:



**Հարթակում նախապես գրանցված և մուտք գործած մասնակիցը մրցույթի մեկնարկից հետո, «Թեստեր» ենթագրից ակտիվացնելով «անցնել թեստը» հրահանգը, ստանում է հնարավորություն թեստային առաջադրանքները լուծելու: Այդ պահից հաշվարկվում է մրցույթի ժամանակը՝ 75 րոպե:**

2.17. Խորհուրդ եւք տալիս մասնակիցներին երկար կանգ չառնել մեկ հարցի վրա, եթե դրան պատասխանել չի հաջողվում: Նպատակահարմար է անցնել հաջորդ հարցին, ապա վերջում վերադառնալ չլուծված առաջադրանքին: Երբ մասնակիցը հարթակում ակտիվացնում է անցնել թեստը հրահանգը, Էկրանի վերևում սկսում է 75 րոպեի հետհաշվարկը, և մասնակիցը կարող է ավելի ճշգրիտ կառավարել իր ժամանակը:

2.18. Յուրաքանչյուր առաջադրանք ունի պատասխանի հինգ տարբերակ, որոնցից **միայն մեկն է ճիշտ:** Լուծելով առաջադրանքը՝ մասնակիցը նշում է տվյալ առաջադրանքի ներքևում առկա պատասխանի 5 տարբերակներից մեկը: Եթե որևէ առաջադրանքի պատասխաններից մասնակիցը չի նշում ոչ մեկը, ապա առաջադրանքը համարվում է չլուծված: Չլուծված առաջադրանքի համար միավոր չի հանվում: Առաջադրանքները լուծելուց և ենթադրյալ ճիշտ տարբերակները նշելուց հետո մասնակիցը սեղմում է «Հաստատել» կոճակը, որից հետո թեստը փակվում է: Չի կարելի «Հաստատել» անավարտ աշխատանքը, քանի որ այն այլևս վերսկսել չի լինի:

2.19. Թեստը մասնակցին հասանելի դառնալուց և ժամանակի հետհաշվարկը սկսվելուց ուղիղ 75 րոպե հետո մրցույթն ընդհատվում է, և թեստը համարվում է ավարտված: Եթե տեխնիկական խափանումներ են լինում մասնակցի մոտ ինչ-որ պահից սկսած, ապա մինչ այդ նրա կողմից լրացված պատասխանները պահպանվում են հարթակում:

### 3. Արդյունքների ամփոփում

3.1. Բոլոր մասնակիցների աշխատանքները հարթակից ելքագրվում են հատուկ համակարգչային ծրագիր, որի միջոցով իրականացվում է ստուգումը: Աշխատանքների ստուգումը տևում է առնվազն երկու շաբաթ, որից հետո մոտ մեկ շաբաթվա ընթացքում ձևավորվում են արդյունքների ընդհանուր ցուցակներ՝ ըստ տարիքային խմբերի: Այդ ցուցակների հիման վրա կազմվում են հաշվետվություններ, որոնք հետագայում ուղարկվում են մրցույթին մասնակից(ներ) ունեցող կրթական կառույցներին էլ. փոստով: **Յուրաքանչյուր կրթական կառույց ստանում է հաշվետվություն միայն իր մասնակից աշակերտների արդյունքների մասին:** Բացի դրանից, յուրաքանչյուր մասնակից գրանցման ժամանակ նշած էլ. փոստի հասցեին նամակ է ստանում, որով տեղեկացվում է իր վաստակած միավորի մասին:

3.2. Մրցույթի արդյունքների հավաստիության ու անկողմնակալության ապահովման համար պատասխանատու են թե՛ մասնակիցները, թե՛ կազմակերպիչները: **Մասնակիցները**

պարտավորվում են աշխատել ինքնուրույն, առանց կողմնակի միջամտության և օգնության՝ հնարավորինս բացահայտելով սեփական ներուժը, ինչը տարեցտարի նրանց համար կապահովի մտքի և հմտությունների զարգացում, ինչպիսիք են ժամանակի ճիշտ կառավարումը, ոչ ստանդարտ խնդիրների լուծումը: Մեր պահանջն է ծնողներից, ընտանիքի մյուս անդամներից՝ տալ մասնակցին իրական հնարավորություն ինքնադրսևորվելու և զարգանալու համար: Իր հերթին «Այբ»-ը **երաշխավորում է** գործընթացների կազմակերպման անաչառությունը և անկողմնակալությունը՝ նախևառաջ ապահովելով մրցույթի առաջադրանքների եզակիությունը և նախքան մրցույթի մեկնարկը դրանց հույժ գաղտնիությունը:

3.3. Բազմաթիվ տարիների համաշխարհային փորձը հաստատում է, որ մրցույթի մասնակիցների ինքնուրույն աշխատելու դեպքում մասնակիցների տված պատասխանների (ինչպես ճիշտ, այնպես էլ սխալ) հաջորդականությունների ամբողջական համընկնում ծայրահեղ հազվադեպ է լինում: Օրինակ՝ եթե մրցույթին մասնակցել է 100 000 աշակերտ, ապա հնարավոր է ոչ ավելի, քան մեկ-երկու աշխատանքների համընկնում, որոնք պատկանում են տարբեր դպրոցներում սովորող նույն տարիքային խմբի աշակերտներին, ովքեր թույլ են տվել միևնույն միայն մեկ սխալը: Երկու սխալի համընկնման դեպքեր գրեթե չեն լինում, իսկ մեծ թվով սխալների համընկնում գործնականորեն անհնար է: Հասկանալի է, որ որքան շատ են ընդհանուր սխալները, այնքան վստահ կարելի է պնդել, որ եղել են խախտումներ, այդ թվում ուղղորդումներ և հուշումներ: Եթե ընտանիքում կա նույն տարիքային խմբի երկու և ավելի մասնակից, պատասխանների համակարգչային մշակումից հետո կատարվելու է նրանց աշխատանքների համադրում: Համընկնող աշխատանքների հայտնաբերման պարագայում «Այբ»-ը իրավասու է որակազրկել դրանք:

3.4. Մրցույթի հիմնական փուլի պատասխանների համակարգչային մշակումից և բոլոր մասնակիցների արդյունքների վերլուծությունից հետո **անցկացվում է(են) մրցույթի հավելյալ (լրացուցիչ) և ստուգիչ փուլ(եր):** Հավելյալ փուլը կազմակերպվում է որոշակի միավորային շեմից բարձր արդյունք գրանցած մասնակիցների համար: Էլեկտրոնային նամակով և կարճ հաղորդագրությամբ (sms) նրանք նախապես տեղեկացվում են, թե երբ է լինելու հավելյալ (լրացուցիչ) փուլը, որի ժամանակ մասնակիցներին տրվում է լրացնելու հատուկ մշակած հարցաշարը: Այս փուլում նախնական արդյունքը պահպանած կամ գերազանցած մասնակիցները ճանաչվում են **լավագույն արդյունք** արձանագրած մրցանակակիրներ: Եթե մասնակիցը որոշակի պատճառներով չի լուծում լրացուցիչ փուլի հարցաշարը, կամ արձանագրում է շեմից ցածր արդյունք, ապա նա չի ճանաչվում լավագույն մրցանակակիր: Մասնակից(ներ)ը, որ(ոնք)ը արձանագրում է(են) հնարավոր առավելագույն արդյունք (100% ճիշտ պատասխաններ) նշված երկու փուլերի ընթացքում, ճանաչվում է(են) **Մրցույթի հաղթող**, եթե հաղթահարում է(են) **ստուգիչ փուլը**, որը կազմակերպվում է հարցազրույցի ձևաչափով:

3.5. Ստուգման և վերլուծության արդյունքում մրցույթի կանոնների կոպիտ խախտումների բացահայտման դեպքում «Այբ»-ն **իրավասու է որակազրկելու** (հանելու մասնակիցների ցուցակից կամ չեղյալ համարելու առանց որևէ փոխհատուցման) մասնակցին/ներին:



Հարգելի ծնողներ, խստորեն խորհուրդ է տրվում գերծ մնալ մրցույթի անցկացման կանոնների որևէ խախտումից՝ հնարավորություն տալով մասնակից աշակերտներին ինքնուրույն փորձելու իրենց ուժերը: Հիշեք, որ «բարի ցանկությունները» կարող են «արջի ծառայություն» մատուցել. չէ՞ որ ավելի լավ է իրական արդյունքներով ոգևորվել, քան որակազրկված լինել:

3.6. Մինչ արդյունքների հրապարակումը մրցույթի կազմակերպիչները պարտավոր են լրացուցիչ հանդիպում (թեստավորում, հարցազրույց) անցկացնել լավագույն մրցանակի հավակնորդների, նաև հավանական հաղթողների (հաղթողի միավորների շեմը հաղթահարած մասնակիցների) հետ՝ պարզելու վերջիններիս արդյունքների իսկությունը:

Լրացուցիչ հանդիպման արդյունքում հավանական հաղթողը հավակնում է ճանաչվելու բացարձակ հաղթող, եթե լրացուցիչ հանդիպման ընթացքում տրված բոլոր հարցերին ու խնդիրներին տա ճիշտ պատասխաններ և մեկնաբանություններ: Լրացուցիչ հանդիպումների արդյունքների վերջնական հաստատումն արվում է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ինչի վերաբերյալ նամակ է ուղարկվում լրացուցիչ հանդիպման մասնակից աշակերտների ծնողներին և աշակերտներին:

- 3.7. Բոլոր աշխատանքները պահվում են «Այբ»-ում մրցույթի անցկացման օրից հետո 4 ամիս: Մինչև այդ պահն ընդունվում են բողոքարկման հայտեր: Բողոքարկում կարող է իրականացնել միայն դպրոցը՝ այն դեպքում, եթե մասնակցի անունը չկա արդյունքների հաշվետվությունում, կամ եթե կասկածի տակ է դրվում ստուգման ճշտությունը: **Առաջադրանքների բովանդակության և/կամ պատասխանների տարբերակների ճիշտ կամ սխալ լինելու վերաբերյալ բողոքներ չեն ընդունվում**, քանի որ առաջադրանքները և դրանց պատասխանների տարբերակները մշակում և ընդունում է «Մեղու» մրցույթի կազմակերպիչը:
- 3.8. **Մասնակից դպրոցների արդյունքները չեն համեմատվում:** Մրցույթից մոտ երեք ամիս հետո բոլոր դպրոցներին ուղարկվում են արդյունքների ամփոփ հաշվետվությունները, որոնցում նշվում են մասնակից աշակերտի վաստակած միավորների թիվը և նրա զբաղեցրած տեղը դպրոցում, մարզում, միասնաբար՝ Հայաստանում և Արցախում: Հիշեցնում ենք՝ դպրոցը ստանում է տեղեկություն միայն իր աշակերտների արդյունքների վերաբերյալ:

#### 4. Մրցանակաբաշխություն

- 4.1. Բոլոր մասնակիցների, լավագույնների և հաղթողների մրցանակաբաշխությունը իրականացվում է մրցանակային ֆոնդից, որը ձևավորվում է մասնակցության վճարներից և հովանավորների ներդրած միջոցներից: Բոլոր մասնակիցների համար նախատեսված են Էլեկտրոնային հավաստագրեր ու փոքրիկ հուշանվերներ: **Բոլոր մրցանակակիրներն արժանանում են պատվոգրերի**, լավագույն արդյունք գրանցած մասնակիցները ստանում են խրախուսական մրցանակներ, իսկ մրցույթի հաղթողները՝ գլխավոր մրցանակ: Մրցույթի մասնակից կրթական կառույցներին շնորհվում են մասնակցության Էլեկտրոնային հավաստագրեր:
- 4.2. Հաղթողները որոշվում են տվյալ տարվա բոլոր մասնակիցների արդյունքների ընդհանուր հաշվետվության արդյունքում: Գլխավոր մրցանակը սահմանում է «Այբ» կրթական հիմնադրամը՝ կախված տվյալ տարվա ընդհանուր արդյունքներից և հաղթողների թվից:

#### 5. Մասնակցության վճար

- 5.1. Մրցույթի մասնակցության վճարը համարժեք է 970 ՀՀ դրամին: Այդ գումարն օգտագործվում է բացառապես կազմակերպչական աշխատանքների և մրցանակների համար:
- 5.2. Մասնակցել ցանկացողները վճարումները կատարում են գրանցմանը զուգահեռ բանկային քարտով փոխանցում կատարելով:
- 5.3. Եթե աշակերտը, վճարումը կատարած լինելով հանդերձ, չի մասնակցել մրցույթին (չկա արդյունքների վերջնական ցուցակում), ապա նա կարող է հետ պահանջել մասնակցության վճարը՝ դիմելով «Այբ» կրթական հիմնադրամ մրցույթի օրից հաշված **մեկ ամսվա ընթացքում**: Գումարը կվերադարձվի բացառապես տվյալ աշակերտի ծնողին՝ վերջինիս դիմումի հիման վրա: Նշված ժամկետից հետո գումարը չի վերադարձվում:

#### 6. Կրթական կառույցի և մասնակիցների քայլերի հաջորդականություն

Կրթական կառույցները մրցույթին մասնակցելու հրավերը ստանալուց հետո.


- նշանակում են մրցույթի պատասխանատուին, որը զբաղվում է հետագա կազմակերպչական հարցերով.
- իրազեկում են աշակերտներին և նրանց ծնողներին մրցույթի և դրա անցկացման կարգի մասին՝ օգտագործելով տվյալ ուսումնական հաստատությունում կիրառվող էլեկտրոնային գործիքները (ֆեյսբուքյան էջ, դասարանների վայբեր խմբեր, տեղեկատվության տարածման այլ միջոցներ).
- ցուցակագրում են կրթական կառույցում մրցույթին ցանկացող մասնակիցներին և ծանոթացնում են գրանցման և վճարման մանրամասներին.
- տեղեկացնում են մասնակիցներին մրցույթի հետ կապված բոլոր նորությունների, ժամկետների, գործընթացների փոփոխությունների մասին:

**6.1. Մրցույթին մասնակցել ցանկացողները** տեղեկանալով մրցույթի մեկնարկի մասին պետք է անեն հետևյալը.

- Տեղեկացնեն մրցույթի պատասխանատուին, որ ցանկանում են մասնակցել մրցույթին:
- Ցուցակագրվեն պատասխանատուի մոտ:
- Գրանցման համար անհրաժեշտ է համացանցին հասանելիություն ունեցող որևէ թվային սարքով մրցույթի անցկացման առցանց հարթակում (<https://spyurk.contests.am/hy>) լրացնել պահանջվող տեղեկատվությունը: Մասնակիցը պետք է ունենա գործող էլ. փոստ (կարող է օգտվել ծնողի էլ. փոստից, սակայն պետք է հաշվի առնել, որ մեկ էլ. փոստով կարող է գրանցվել մեկ մասնակից): Հետագայում նշված էլ. փոստի հասցեն լինելու է մասնակցի մուտքանունը, իսկ **գաղտնաբառը** (նվազագույնը ութ նիշ՝ լատիներեն մեծատառ և փոքրատառ, նաև՝ թվեր) պետք է ճշգրիտ հիշել, որ հարթակ մուտք գործելիս խնդիրներ չառաջանան, գաղտնաբառը կարելի է փոխել կամ թարմացնել՝ ըստ անհրաժեշտության:
- Գրանցման ընթացքում համակարգը ուղղորդում է ծանոթանալ մրցույթի կանոններին և հաստատել համաձայնությունը դրանց:
- Գրանցման ժամանակ համակարգը թվային ծածկագիր (կոդ) է ուղարկում մասնակցի նշած հեռախոսահամարին sms հաղորդագրությամբ՝ հավաստիանալու համար, որ հեռախոսահամարը գոյություն ունի: **Այդ ծածկագիրը պետք է լրացնել համապատասխան բացված պատուհանում:** Յուրաքանչյուր մասնակցի գրանցման համար պետք է մուտքագրել առանձին հեռախոսահամար: Եթե ծածկագիրը չի գալիս, պետք է առաջացած խնդրի մասին գրել [meghu@ayb.am](mailto:meghu@ayb.am) էլ. հասցեին՝ նշելով «Սփյուռք» բառը նամակի վերնագրում:
- Գրանցման տվյալները լրացնելուց հետո հարթակում բացվում է մասնակցի անձնական էջը՝ պրոֆիլը, որտեղ նա տեսնում է իր անուն-ազգանունը, էլ. հասցեն և կարող է ուղղումներ կատարել, եթե այդ տվյալների մեջ կա անճշտություն:
- Գրանցման ավարտին համակարգը առաջարկում է **վճարել** մասնակցության համար՝ բանկային քարտով փոխանցում կատարելով:
- Գրանցումը և վճարումը կատարելուց հետո ակտիվանում է օգտատիրոջ տվյալներով բացված պրոֆիլը, որից հետո մասնակիցը կարող է օգտվել հարթակի ընձեռած հնարավորություններից (նախքան մրցույթի օրը թեստեր բաժնում հասանելի կլինի փորձնական թեստի նմուշ, որը կարելի է լուծել, նշել պատասխանները)՝ հարթակ մուտք գործելով էլեկտրոնային հասցեով և գաղտնաբառով:
- Մրցույթի օրը մինչև մրցույթի մեկնարկը հարթակում գրանցված յուրաքանչյուր մասնակից իր մուտքանունով (գրանցման ժամանակ նշած էլ. փոստ) և գաղտնաբառով մուտք է գործում հարթակ:

- **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Մրցույթի ընթացքում նույն մասնակցի համար մեկից ավելի սարքով մուտք գործելու դեպքում համակարգը ճանաչում է կանոնների խախտում, և մասնակցի հետագա աշխատանքը հարթակում խափանվում է:
  - Մրցույթի մեկնարկից հետո հարթակի «Թեստեր» հատվածում ակտիվացնելով «Անցնել թեստը» հրահանգը՝ մասնակցի էջում բացվում են այն դասարանի առաջադրանքները, որը նշվել է գրանցման ժամանակ: **Այդ պահից սկսվում է մրցութային ժամանակի՝ 75 րոպեի հետհաշվարկը:** Եթե գրանցման ժամանակ սխալ է նշվում դասարանը, ապա մասնակցի էջում կլինի սխալ դասարանի թեստ, 1-2-րդ դասարանների թեստեր չկան, այդ դասարանները նշած մասնակիցների համար թեստերի հատվածը կլինի դատարկ: Եթե լրացնելիս գրանցողը սխալ է նշել դասարանը, պետք է այդ մասին տեղեկացնի մրցույթի կազմակերպիչներին, որ այդ սխալը ուղղեն:
  - Լուծելով առաջադրանքը՝ մասնակիցը նշում է այն պատասխանը, որը ճիշտ է համարում: Յուրաքանչյուր առաջադրանքի համար պատասխանների առաջարկվող հինգ տարբերակից ճիշտ է միայն մեկը, և պետք է նշել միայն մեկ տարբերակ: Առաջադրանքը համարվում է չլուծված, եթե ոչ մի պատասխան չի նշվել կամ նշվել է պատասխանի սխալ տարբերակ:
  - Երբ մասնակիցը վերջացրել է թեստի հետ աշխատանքը, նա նշում է «Հաստատել» կոճակը վերջին առաջադրանքի ներքևում, որից հետո թեստը փակվում է և այլևս հասանելի չի լինում փոփոխությունների համար: Այդ իսկ պատճառով **ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱՆԱՎԱՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԵԼ:**
  - Սակայն, եթե ժամանակը սպառվել է, ինչի պատճառով թեստը դարձել է անհասանելի, պետք չէ անհանգստանալ. **նշած պատասխանները պահպանվում են և ենթակա են ստուգման:**
  - Ստուգումներից հետո մասնակիցները Էլեկտրոնային նամակով տեղեկացվում են գրանցած արդյունքների, ըստ անհրաժեշտության՝ հաջորդ փուլերին մասնակցելու մասին:
  - Մրցույթից մոտ երկու ամիս հետո կրթական կառույցը ստանում է հաշվետվություն մասնակիցների արդյունքների մասին: Դրանից հետո տեղի են ունենում մրցանակաբաշխության արարողությունները, որոնց մանրամասները լրացուցիչ հայտարարվում են:
- 6.2. Բողոքարկումների դիմումները (ներկայացվում են դպրոցների կողմից) ընդունվում են «Այբ» կրթական հիմնադրամում մրցույթի անցկացման օրից հետո 4 ամիս:



 Երևան 0037, Ազատության 1/21  
(060) 701-707, (093) 01-08-63  
Էլ. փոստ՝ [meghu@ayb.am](mailto:meghu@ayb.am)